

Կայացավ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի տարեկերջյան ասուլիսը

Դեկտեմբերի 26-ին տեղի ունեցավ մարզպետ Գաբրիել Գյոզալյանի տարեկերջյան ասուլիսը: Մարզպետը ներկայացրեց 2016 թվականի ընթացքում մարզում իրականացված ծրագրերը եւ առաջիկա անելիքները:

Մարզային լրատվամիջոցների ղեկավարներն ու լրագրողները տեղեկացան, որ դեկտեմբերի 22-ի դրությամբ մարզում ըստ ոլորտների կատարվել կամ ընթացքի մեջ է շուրջ 34 ներդրումային ծրագիր, որոնց համար ֆինանսավորումը կազմել է՝ շուրջ 6,525,766.0 հազար դրամ: Այդ թվում՝ ՀՀ պետական բյուջեից հատկացվել է՝ շուրջ 5,383,766.0 հազար դրամ, բարեգործական կազմակերպությունների, անհատ բարերարների և այլ ծրագրերի միջոցներից՝ շուրջ 668,000.0 հազար դրամ, մարզի համայնքների բյուջեներից՝ շուրջ 474,000.0 հազար դրամ:

Մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են հետևյալ կերպ. արդյունաբերություն՝ 1.9 %, գյուղատնտեսություն՝ 10.0 %, շինարարություն՝ 3.7 %, մանրածախ առևտուր՝ 1.3 %, ծառայություններ՝ 0.8 %

Անդրադարձնալով շինարարությանը, մարզպետը նշեց, որ 3 մեծ ծրագիր է իրականացվել՝ կառուցվել են Ալագյազի եւ Վարդենիսի դպրոցները, ինչպես նաեւ Աշտարակի մարզադպրոցը: Լուծվել են նաեւ դրանց նոր գույքով, անհրաժեշտ սարքավորումներով ապահովելու հարցերը: Վերանորոգման, կառուցապատման եւ բարեկարգման ծրագրեր կան նաեւ մանկապարտեզների մասով:

Գյուղատնտեսության բնագավառում եւս նպաստավոր ծրագրեր են իրականացվել: Ներմուծվել եւ գյուղացիական տնտեսություններին մատչելի պայմաններով տրամադրվել են ազոտական պարարտանյութ, դիզվառելիք եւ այլն: Գյուղացիական տնտեսություններին մեծ վնաս հասցրեց հունիսի կարկտահարությունը, որից առանձնակի տուժեցին Աշտարակի համայնքները: Բոլորովին վերջերս կառավարության որոշմամբ 175 մլն. դրամ է հատկացվել մոտ 33 համայնքի բնակիչներին՝ ոռոգման ջրի վարձի զիջման նպատակով:

Բավականին մեծ, համալիր ծրագիր է նախատեսվում իրականացնել Աշտարակ քաղաքում՝ ուղղված զբոսաշրջության զարգացմանը: Մարզի մյուս համայնքներում եւս նոր նախաձեռնություններ են մշակվում, որոնք տեղ են գտնելու նրանց կողմից կազմվող զարգացման ռազմավարական ծրագրերում:

Մարզպետը նշեց, որ ներդրումային ծրագրերի հաստատման եւ մոտեցման մոտեցումները, սակայն, ներկայումս այլ են: Այդ գործում հաշվի են առնվելու համայնքների բյուջեների կատարման, սեփական եկամուտների հավաքագրման արդյունքները: Մարզում այս գործընթացը բավականին լավ է իրականացվում: Դեկտեմբերի 20-ի դրությամբ սեփական եկամուտները կազմել են 93 տոկոս, որը մինչեւ տարեվերջ անպայմանորեն կհասնի 100 տոկոսի: Այս ցուցանիշը առաջինն հանրապետության մարզերի մեջ է:

Իրենց գործունեության մեջ Գաբրիել Գյոզայանը կարեւորեց խնայողության սկզբունքով աշխատանքը: Առողջապահական եւ կրթական համակարգում կատարվել են հաստիքացուցակների վերանայման, թափուր աշխատատեղերի համալրման եւ բարելավման այլ աշխատանքներ: 2016 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, ըստ ոլորտների տնտեսվել է շուրջ 147,575.0 հազար ՀՀ դրամ, որից՝ մարզպետարանում 15 մլն, առողջապահության ոլորտում 82 մլն, կրթության ոլորտում 50 մլն. դրամ: Այս մոտեցումը շարունակվելու է նաեւ գալիք տարում:

Լսելով հաշվետվությունը, մարզպետին իրենց հարցերն ուղղեցին լրագրողները: Նրանց առավելապես հետաքրքրում էր համայնքների խոշորացման, զարգացման ծրագրերի, համայնքներում իրականացվող աուդիտի, զոհված զինվորներին ցուցաբերվող աջակցության հետ հապված եւ այլ հարցեր: